

համաձայն (Բ. Մնաց. Դ. 20), բայց հաւանական չէ որ առաջին աշտանակին նույնարական հանգամանքը ունենային անոնք նաբազողուսուոր երբ զրաւեց Երևանակեմը՝ ամէն այս առարկաները փոխադրեց բարելոն (Երեմ. ԾԲ. 19):

4. — Զորաբարելի Տաճարին եւ Հերովդէսի Տաճարին ուկի աւտանակը.

Մէկ աշտանակ միայն կար երկրորդ Տաճարին ու Հերովդէսի Տաճարին մէջ: Այդ աշտանակը Սիւրբոյ Անտիոքոս Դ. թագաւորին ձեռքով վերցուելէ ու խորտակուելէ յետոյ (Ա. Մակ. Ա. 23): Վերստին շինուեցաւ Յուղայ Մակարէի ձեռամբ (Ա. Մակ. Դ. 49) ու գործածութեան զըրուեցաւ Մէծն Հերովդէսի վերակերտած Տաճարին մէջ: Հստ Թալմուտի՛ Սուրբ Քաղաքի կործանումէն զրեթէ քառասուն տարի առաջ, այսինքն Յիոնուի քարոզութեան եւ մահուան տարիներուն, Եօթնաստեղնեան աշտանակի միջին ճրապը մարեցաւ ինքնին, ինչ որ գուշակութիւն մը համարուեցաւ Տաճարի կործանումին: Երաւաղէմի Տիոնոէ զրաւուելէն յետոյ Եօթնաստեղնեան աշտանակը տարուեցաւ Հոռմ:

5. — Եօթնաստեղնեան աշտանակի պատկերներն ու խնդակները.

Եօթնաստեղնեան աշտանակը ցայսօր կ'երեի Հոռմի մէջ, Կողոսէօնի մօտիկ, Տիտոսի յաղթական կամարի հարթաքանդակներէն մէկուն վրայ, որուն ամբողջութիւնը թէկ ճշգրտօրէն համաձայն է Սուրբ Գիրքի նկարզգրածին, սակայն քանի մը քմանըկար մանրամասնութիւններ կան հոն, ինչպէս՝ խորիսին վրայ քանդակուած մտացածին կենդանիներու գէմքեր, ինչ որ գըլխովին հակառակ է Մովսէսի Օրէնքին ու հրէական սովորութիւններուն:

Նախեւառաջ Վեսպասիանոսի ձեռքով Աշտանակը զրուեցաւ Խաղաղութեան տաճարին մէջ: Միլվիոսի կամուրջի պարտութենէն յետոյ Մաքսինտիոսի Տիբեր գետը նեսել տուաւ զայն, ուրկէ ետքէն հանեց կոսնանդ: Հոռմի զրաւման ժամանակ (455) տարուեցաւ կարթագինէ, յետոյ՝ Կ.

Պոլիս: Յուստինիանոս զրկեց զայն Երուսաղէմ, ուր կորսուեցաւ անոր հետքը: Հաւանական է որ Պարսից Խոսրով Բ. թագաւորը զայն ալ աւարած ըլլայ Երուսաղէմի տիբած ժամանակ (614):

Եօթնաստեղնեան աշտանակը ներկայացուած է յաճախ հին սինտիկներու (ինչպէս Կափառնաուումի ու Տիբերիայի) պատերուն վրայ, նաև՝ հրէական լապտերներու և Պաղեստինի Հրէից գերեզմաններու վրայ ու հոռմէական շրջանին՝ Խոտլիոյ գերեզմանատանց մէջ:

6. — Եօթնաստեղնեան աշտանակը իրեն խորհրդանաւ:

Հստ Յովսէպոսի՝ անոր եօթը ճիւղերը կը խորհրդանշեն հրէական եօթնեակի սըրբութիւնը: Ուրիշներ, ինչպէս Փիլոն, թէկ անձահօրէն, Եօթնաստեղնեան աշտանակին մէջ կը տեսնին եօթը մոլորակներու խորհրդանշանը: Լաւագոյն է, սակայն, ըսել՝ թէ անիկա իր եօթը ճիւղերով, որ եօթը նույիրակուն թիւը կը խորհրդանշէր, ու իր ճոյութեամբ չքեղ առարկոյ մըն էր՝ արժանի մշտապէս գտնուելու Աստուծոյ Տաճարին մէջ:

Հայացուց՝ Մ. Ե. Ն.

ԽՈՐՀՈՒԹ ԵՒ ԽՈՍՔ

Միուրիւնը նպաստառ և մասնիկումին: ու մասնիկուելու պայմանով է միայն ու մարդու կարող և պարզել խորհուրդի եւ կամինի օրութիւն մը:

*
Թո՛ղ մարդու ազնի ըլլայ, թո՛ղ բարի եւ նախամասոյց ըլլայ, թո՛ղ անդադար աշխատակի բանի որ արդար ու օգտակար է: Թո՛ղ մեզի համար ըլլայ անիկա պատկեր մը աստուծութիւններուն, որոնց նախազգացումն ունին:

*
Տիեզերքի ամեննեն զեղեցիկ առարկան, կ'ըս ինաստակը մը, հակառակորդին դիմ մարտնչող պարկէց մարդէ է. կայ սակայն առելի զեղեցկաղոյնը, զայն միսիրարող պարկէց մարդէ և այն: